




ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈԼԵԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

ուսումնա-մեթոդական ձեռնարկ





ՀՀ ԱՌՈՂՋԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ**

ուսումնա-մեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» հրատարակչություն
2013

ՀՏԴ 613 (07)

ԳՄԴ 51.2g7

Ը 391

Ընդհանուր հիգիենայի գործնական պարապմունքների ուսումնա-մեթոդական ձեռնարկը կազմվել է Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջի հիգիենայի ամբիոնի դասախոս Եվ. Յամալյանի կողմից:

Ը 391 Ընդհանուր հիգիենայի գործնական պարապմունքներ:

Ուսումնա-մեթոդական ձեռնարկ/ՀՀ Առողջապահության նախարարության ԵՊՀԲ քոլեջ կազմ. Եվ. Յամալյան:

Ուսումնա-մեթոդական ձեռնարկը քննարկվել և հաստատվել է քոլեջի մեթոդ-խորհրդի կողմից և նախատեսվում է բժշկական քոլեջների ուսանողների ուսուցման համար:

Եր.: Լեզալ Պլյուս, 2013, - 52 էջ

ՀՏԴ 613(07)

ԳՄԴ 51.2g7

ISBN 978-9939-815-37-4

© Լեզալ Պլյուս, 2013

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ
Օդի ֆիզիկական հատկությունների որոշումը
գործիքների միջոցով

Օդի ջերմաստիճանի որոշումը

Օդի ջերմաստիճանը որոշում են սնդիկային կամ սպիրտային ջերմաչափերի օգնությամբ: Ջերմաստիճանի որոշումը կատարվում է հատակից 1,5 մ բարձրության վրա, և ջերմաչափը պետք է պահել այնպես, որպեսզի արևի ուղիղ ճառագայթները չընկնեն նրա վրա:

Սնդիկային ջերմաչափերն ավելի մեծ կիրառում են գտել քան, սպիրտայինները, քանի որ դրանք ավելի ճշգրիտ են և դրանցով կարելի է չափումները կատարել ավելի մեծ սահմաններում -35° -ից մինչև $+35.7^{\circ}$ C ըստ Յելսուսի: Սպիրտը 0° -ից բարձր տաքացնելիս ընդարձակվում է և նրա եռման ջերմաստիճանը հավասար է 78.3: Այդ իսկ պատճառով սպիրտային ջերմաչափները բարձր ջերմաստիճաններ չափելու համար պիտանի չեն: Սպիրտային ջերմաչափերի օգնությամբ չափում են ցածր ջերմաստիճաններ մինչև -1300 ըստ C-ի:

Բոլոր ջերմաչափերն ունեն նույն կառուցվածքը: Կազմված են ավազանից, որտեղ լցվում է սնդիկը կամ սպիրտը, մազանոթից, որով բարձրանում է հեղուկը, սանդղակից, որի վրա կա նիշեր:

Օդի խոնավության որոշումը

Օդի խոնավությունը որոշում են Ավգուստի կամ Ասմանի խոնավաչափերով:

Ավգուստի խոնավաչափ

Սարքը կազմված է 2 միատեսակ սնդիկային կամ սպիրտային ջերմաչափերից, որոնցից մեկը կոչվում է չոր, մյուսը՝ թաց: Խոնավաչափի սնդիկային ավազանը փաթաթված է մառյալով կամ բատիստով, և իջեցված է թորած ջրով բաժակի մեջ: Թրջված կտորից ջուրը գոլորշիանալով իջեցնում է թաց ջերմաչափի ջերմաստիճանը, դրա համար էլ չոր և թաց ջերմաչափերի ջերմաստիճանների միջև առաջանում է տարբերություն:

Բաց ջերմաչափի ավազանի մակերեսից ջրի գոլորշիացումը և ավազանի սառեցումը կշարունակվի այնքան ժամանակ մինչև ավազանի շուրջը գտնվող օդը չհագենա խոնավությամբ: Երկու ջերմաչափերի ցուցմունքները վերցնում ենք այն ժամանակ, երբ դադարում է թաց ջերմաչափի սնդիկի սյան իջեցումը: Սարքը ամրացված է հատուկ շտատիվի վրա և չափումը կատարվում է այնպես, որպեսզի խոնավաչափի վրա չազդի ջերմային ճառագայթումը կամ օդի շարժումը, որոնք կարող են ազդել ջերմաչափի ցուցմունքի վրա: Հաշվարկը կատարվում է 10-15 րոպե հետո: Օգտվում են հատուկ աղյուսակից, որի ուղղահայաց մասում տրված է թաց ջերմաչափի ցուցմունքը, հորիզոնական մասում չոր և թաց ջերմաչափերի ցուցմունքների տարբերությունը: Երկուսի

հատման կետը կլինի հարաբերական խոնավությունը արտահայտված %-ներով:

Ասմանի խոնավաչափ

Այս սարքն էլ պես կազմված է 2 ջերմաչափերից՝ չոր և թաց: Զերմաչափերի սնդիկային ավազանները վերցված են մետաղյա պատյանի մեջ, որը նրանց պահպանում է ջերմային ճառագայթման ազդեցությունից: Սարքի վերևում կա օդափոխիչ հարմարանք, որն ապահովում է սնդիկային ավազանի շուրջը հաստատուն օդի շարժման արագության (2 մ/վրկ): Չափումից առաջ թաց ջերմաչափի թանգիֆը թրջում են թորած ջրով հատուկ պիպետկայի օգնությամբ և խոնավաչափը ուղղահայաց կախում են հետազոտվող վայրում հատակից 1,5մ բարձրության վրա: Սարքի ցուցմունքը ամռանը վերցվում է 4-5 րոպե հետո, իսկ ձմռանը 15-20 րոպե հետո: Հարաբերական խոնավությունը որոշվում է հատուկ աղյուսակի օգնությամբ ինչպես Ավգուստի խոնավաչափի դեպքում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Օդի շարժման արագության որոշումը

Մթնոլորտային օդի շարժման արագությունը որոշվում է հողմաչափի (անեմոմետրի) օգնությամբ: Գոյություն ունեն թասային և թևավոր հողմաչափեր: Թասային անեմոմետրի վերին մասում կան չորս սնամեջ թասիկներ, որոնք պտտվում են սարքին ամրացված հորիզոնական առանցքի շուրջը: Օդի շարժման դեպքում թասիկները սկսում են

պտտվել և յուրաքանչյուր պտույտ արտահայտված մետրերով հաղորդվում է հաշվիչներին: Սարքի վրա կա 3 հաշվիչ՝ տասնյակ հարյուր և հազար մետրեր արտահայտող: Նախքան սարքը միացնելը ֆիքսվում է հաշվիչների ցուցմունքը, որը կոչվում է նախնական ցուցմունք, որից հետո միացվում է անեմոմետրը և միաժամանակ վայրկյանաչափը: 4-5 թույլ աշխատելուց հետո անջատվում են սարքը և ֆիքսում վերջնական ցուցմունքները: Հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ.

1. թույլները վերածել վայրկյանների,
2. գտնել նախնական և վերջնական ցուցմունքների տարբերությունը,
3. այդ տարբերությունը բաժանել աշխատաժամանակի վրա, արտահայտված թույլներով և կստանանք օդի շարժման արագությունը, արտահայտած մ/վ-ով:

Օրինակ՝

- նախնական ցուցմունքը 8560մ
- վերջնական ցուցմունք 8920մ
- սարքը աշխատել է՝ 4 թույլ – 240վրկ

$$1. 8920 - 8560 = 360$$

$$2. 360 : 240 = 1.5 \text{ մ/վրկ}$$

Թասային անեմոմետրով չափումները կատարում են բաց տարածքներում, երբ օդի շարժման արագությունը կազմում է 1-20 մ/վրկ:

Թևավոր անեմոմետրերը ավելի զգայուն են և գրանցում են մինչև 5 մ/վրկ օդի շարժման արագություն:

Մթնոլորտային ճնշումը չափում են բարոմետրերի կամ բարոգրաֆների օգնությամբ:

Չափման միավորը սմ սնդ. սյան բարձրություն, որը նորմայում հավասար է 76 սմ կամ 760 մմ սնդիկի սյան:

Բարոգրաֆը ամրացնում են ամուր պատվանդանի վրա և հեռու ջերմային աղբյուրներից: Բարոգրաֆը հնրավորություն է տալիս անընդհատ չափել մթնոլորտային ճնշումը:

Բարոմետրերը լինում են սնդիկային:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Օդի ֆիզիկական պարամետրերի որոշումը և գնահատումը շինություններում

Շինություններում ջերմային ռեժիմը որոշելու համար նրա 4 տարբեր կետերում տեղադրում են ջերմաչափեր (չափումը կատարում 5-7 րոպե): Շինության կենտրոնում ջերմաչափը տեղադրում են հատակից 0.5մ և 1.5մ բարձրության վրա:

Եվ պատից 10 սմ ներս և դուրս նորից 1,5մ բարձրությա վրա: Շինության միջին $t_{\text{միջ}}^0 = \frac{\sum t^0}{4}$

Բնակարաններում և ուսումնական հաստատություններում օդի ֆիզիկական հատկությունները բավարար են համարվում, երբ $t^0 = 20-25$, հարաբերական խոնավությունը 30-60%, օդի շարժման արագությունը 0,1 -0,25 մ/վրկ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մթնոլորտային օդում CO₂-ի խտության որոշումը

Արտաշնչած օդը պարունակում է 15 - 16% O₂ (թթվածին) և 3.4 – 4.7 % CO₂ (ածխաթթու գազ), ինչպես նաև քրային գոլորշիներ և ունի 37⁰ C ջերմություն: Արտաշնչումից օդ են անցնում նաև պաթոգեն միկրոօրգանիզմները (ստաֆիլակոկեր, ստրեպտոկոկեր), ինչպես նաև քիմիական միացություններ՝ ամոնյակ, ծծմբաջրածին, ցնդող ճարպաթթուներ, ինդոլ, սկտոլ, մերթկապտան և այլն: Օդի ֆիզիկաքիմիական կազմի փոփոխությունը անբարենպաստ ազդեցություն է ունենում մարդու ինքնազգացողության, աշխատունակության վրա: Օդում նյութափոխանակության բազմաթիվ նյութերի որոշումը դժվար է, այդ իսկ պատճառով օդային միջավայրի բնութագիրը ստալու համար որոշում են CO₂-ի կոնցենտրացիան: Բնակելի շինություններում CO₂-ի պարունակության թույլատրելի քանակը (ՄԹԽ) մինչև 0.1 % է: Եթե CO₂-ի պարունակությունը մթն. օդում 1% է, ապա մարդու օրգանիզմում կարող են նկատվել թթվահիմնային հավասարակշռության խանգարում (ացիցոզ), բայց աշխատունակությունը չի փոխվում: CO₂-ի 1.5-3% խտության դեպքում հնարավոր են թունավորման նշաններ (շնչարգելություն, գլխացավ) և աշխատունակության անկում:

CO₂-ի 6% խտության դեպքում (կրիտիկական մակարդակ) մարդու կյանքին վտանգ է սպառնում, իսկ 10-

12% խտության դեպքում, մարդը կորցնում է գիտակցությունը և վրա է հասնում մահը:

CO₂-ի թունավորման դեպքեր են նկարագրվել հանքահորերում, սուզանավերում, կոյուղու հորերում և այլն:

Օդում CO₂-ի խտության որոշման էքսպրես մեթոդի հիմքում ընկած է սողայի լուծույթի և CO₂-ի ռեակցիան: 100մլ տարողություն ունեցող ներարկիչով ներքաշում են 20մլ 0.005% սողայի լուծույթ, որը ներկված է 1-2 կաթիլ ֆենոլֆտալեինով: Քանի վոր ֆենոլֆտալեինը վարդագույն է, սողայի լուծույթը ստանում է վարդագույն գունավորում: Այնուհետև ներքաշում են 80մլ օդ և թափահարում 1 րոպ ընթացքում:

Եթե լուծույթը չի գունաթափվում, ապա օդը ներարկիչից զգույշ հանում են, թողնելով նրա մեջ լուծույթը և նորից ներքաշում են համապատասխան չափաբաժին օդ ու թափահարում 1 րոպե: Այս գործողությունը կրկնում են 3-4 անգամ, որից հետո օդի ներքաշումը իրականացվում է փոքր չափաբաժիններով (10-20մլ): Հաշվելով օդի ընդհանուր ծավալը, որը ներքաշել ենք ներարկիչի մեջ, աղյուսակի օգնությամբ որոշում ենք CO₂-ի խտությունը օդում:

Աղյուսակ՝

Օդի ծավալը մլ	CO ₂ խտութեամբ%	Օդի ծավալը մլ	CO ₂ խտութեամբ%	Օդի ծավալը մլ	CO ₂ խտութեամբ%
85	0.317	200	0.186	330	0.116
90	0.310	210	0.174	340	0.112
95	0.298	220	0.168	350	0.109
100	0.286	230	0.162	360	0.102
110	0.270	240	0.156	370	0.098
120	0.259	250	0.150	380	0.293
130	0.235	260	0.144	390	0.089
140	0.228	270	0.138	400	0.085
150	0.216	280	0.134	410	0.081
160	0.209	290	0.130	420	0.076
170	0.201	300	0.128	430	0.073
180	0.195	310	0.123	440	0.068
190	0.190	320	0.120	450	0.063

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ջրի նմուշի վերցնելը բակտերիոլոգիական և քիմիական հետազոտության համար

Խմելու ջրի որակի մասին գաղափար կազմելու համար վերցվում է ջրի նմուշը և կատարվում սան-հիգիենիկ հետազոտություն: Ջրի քիմիական հետազոտություն կատարելու համար վերցվում է 2լ ջուր: Տարաները որոնցով վերցվում են նմուշները, պետք է լավ լվանալ, ողողել թորած ջրով, իսկ նախկան նմուշի վերցնելը 2-3 անգամ ողողել

հետազոտվող ջրով: Նմուշը վերցնում են բատոմետրերով, իսկ նրա բացակայության դեպքում՝ պլասմասե շերով: Զուրը վերցնում են այնքան, որ խցանի և ջրի միջև մնա որոշոկի տարածություն: Գործող ջրմուղի դեպքում ջրի նմուշը վերցնում են անմիջապես ծորակից կամ ջրհորից: Բաց ջրամբարներից, գետերից ջրի նմուշը վերցվում է ափից 70 սմ հեռավորության և հատակից 0,5 մ բարձրության վրա: Ճշգրիտ արդյունքներ ստանալու համար հետազոտությունը պետք է կատարել արագ, եթե 2,5 ժամվա ընթացքում հնարավոր չէ, ապա ջուրը կոնսերվացվում է 2 մլ 25 % H₂SO₄-ով, մյուս շշում՝ 2 մլ քլորոֆորմով: Ջրի նմուշը վերցնելուց հետո կազմվում է ուղեկցող փաստաթուղթ, որտեղ նշվում է նմուշի վերցման վայրը, հետազոտության նպատակը, հետազոտողի անունը, ամսաթիվը, ժամը և այլն:

Ջրի նմուշ ի վերցնումը Բակտերիոլոգիական հետազոտության համար

Այս նպատակի համար վերցվում է 0,5 լ ջուր: Զուրը պետք է վերցնել ստերիլ ապակյա շերով և փակել ստերիլ տամպոնով կամ խցանով: Զուրը շշի մեջ պետք է լցնել այնքան, որպեսզի ջրի և խցանի միջև մնա տարածություն: Ծորակից նմուշ վերցնելիս, անպայման ծորակը ստերիլիզացվում է (ախտահանվում է) այրման միջոցով: Զուրը բաց է թողնվում 10-15 րոպե, որից հետո վերցվում է նմուշը:

Բակտերիոլոգիական անալիզի համար օգտգործվող շերը պետք է լվանալ, չորացնել և 1 ժամ ախտահանել 160°

Շ ջերմության տակ: Այստեղ նույնպես կազմվում է ուղեկցող փաստաթուղթը:

Խմելու ջրի ֆիզիկական հատկությունները

Ջրի օրգանոլեպտիկ կամ ֆիզիկական հատկություններն են՝ ջրի ջերմաստիճանը, հոտը, համը, թափանցելիությունը, գույնը և պղտորությունը: Սրանք այն հատկություններն են, որոնք որոշվում են մարդու զգայարանների միջոցով:

Ջրի ջերմաստիճանը

Ընդունված է, որ խմելու ջուրը պետք է ունենա +7-13 աստիճան ջերմություն: Ջրի ջերմաստիճանը չափում են սնդիկային ջերմաչափով: Բաց ջրամբարի ջրի ջերմաստիճանը որոշելու համար ջերմաչափը իջեցնում են 20սմ խորության վրա և սպասում 15-20 րոպե, ապա որոշում ջրի ջերմաստիճանը:

Ջրի հոտը

Խմելու ջուրը չպետք է ունենա հոտ: Ջրի հոտը որոշվում է հոտառական օրգանի միջոցով: Հոտը որոշելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները՝

1. հետազոտման սենյակում բացի հետազոտողից ուրիշ անձ չպետք է լինի
2. հետազոտողն իր վրա օծանելիք չպետք է կրի
3. հետազոտությունը երկար չպետք է տևի (մինչև 5 րոպե):

15-200 ջերմություն ունեցող ջուրը լցվում է լայն բերան ունեցող 150-200 մլ տարողություն ունեցող գլանի մեջ 2/3 չափով և բերանը ծածկում ժամացույցի ապակիով: Կատարում են մի քանի թափահարում, այնուհետև ապակին վերցնում են և հոտ քաշում.

1. Հոտ չկա - 0 բալ
2. Շատ թույլ - 1 բալ
3. Թույլ - 2 բալ
4. Նշամարելի - 3 բալ
5. Զգալի - 4 բալ
6. Շատ ուժեղ - 5 բալ

Ջրի համը

Ջրի համը պայմանվորված է նրա մեջ գտնվող աղերով և գազեչով: Ջրի համը որոշվում է անմիջապես աղբյուրի մոտ: Դրա համար ջուրը վերցնում են բերանի մեջ և մի քանի վայրկյան պահում (կուլ տալը պարտադիր չէ), և ինչ-որ զգում են, այն էլ գրում: Իսկ եթե ջուրը էպիդեմիոլոգիական տեսակետից վտանգավոր է, ապա այն եռացնում են, սառեցնում մինչև 15-200 C և որոշում համը: Ջրի համը 2 բալից չպետք է անցնի.

1. Հոտ չկա - 0 բալ
2. Շատ թույլ - 1 բալ
3. Թույլ - 2 բալ
4. Նշամարելի - 3 բալ
5. Զգալի - 4 բալ
6. Շատ ուժեղ - 5 բալ

Ջրի թափանցիկությունը

Խմելու ջուրը պետք է լինի թափանցիկ, եթե պղտոր է, նշանակում է նրա մեջ կան օրգանական նյութեր և միկրոբներ: Ջրի թափանցիկությունը որոշվում է լաբորատորիայում կամ անմիջապես աղբյուրի մոտ:

Աղբյուրի մոտ որոշելու համար վերցնում են 30 սմ տրամագծով ցինկե դիսկ (սկավառակ), նրա կենտրոնից ամրացնում են թել, որի վրա յուրաքանչյուր 10սմ մեկ լինում է հանգույց և այն կախում են բաց ջրամբարի մեջ: Այն վերջին կետը որտեղից երևում է դիսկը կլինի ջրի թափանցիկությունը: Միջազգային պրակտիկայում ընդունված չափանիշներով ջրի թափանցիկությունը պետք է լինի 30 սմ:

Լաբորատորիայում թափանցիկությունը որոշում են Սնելենի սարքով, որն իրենից ներկայացնում է 50-60 սմ բարձրությամբ գլան, որը սատիճանավորված է: Գլանն ունի ծորակ, որի վրա ամրցված է ռեզինե խողովակ և վերջինիս վրա կա սեղմիչ: Գլանի տակ դրվում է Սնելենի սղյուսակը: Հետազոտվող ջուրը լցնում են գլանի մեջ և ծորակից աստիճանաբար բաց թողնում այնքան, մինչև տակի աղյուսկը կարդացվի (նորմա 30սմ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ջրի մեջ մնացորդային Cl –ի քանակի որոշումը

Ջրի վարակազերծման համար պետք է ընտրել Cl-ի համապատասխան չափաբաժին: Այս մեթոդով վարակազերծումը իրականացվում է կենտրոնացված

ջրամատակարարման դեպքում: Դրա համար ընտրվում է քլորակրի այնպիսի՝ չափաբաժին, որը կապահովի լավ մանրէասպան (բակտերիցիդ էֆֆեկտ) ազդեցություն: Ամռանը ջրի և քլորի կապը պետք է տևի 30 րոպե, իսկ ձմռանը 1-2 ժամ, որից հետո ջրի վարակազերծման որակը ստուգելու համար որոշվում է մնացորդային Cl-ի քանակը: Մնացորդային Cl-ի քանակի որոշումը իրականացվում է հետևյալ փուլերով՝

1. 1% քլորակրի լուծույթի ստուգում,
2. փորձնական քլորացում,
3. մնացորդային Cl-ի ստուգում:

1%-նոց քլորակրի լուծույթ պատրաստելու համար կշռում են 1 գրամ չոր քլորակիր և լցնում հախճապակյա թասի մեջ, վրան ավելացնում 5-10 մլ թորած ջուր և առաջացած մասսան տեղափոխում 100 մլ տարողության չափիչ կոլբայի մեջ և ընդհանուր ծավալը հասցնում 100 մլ-ի:

Փորձնական քլորցման համար 3 բաժակների մեջ լցնում են 200-ական մլ ջուր:

I-ին բաժակին ավելացնում են 2 կաթիլ 1 % -նոց քլորակրի լուծույթից, II –րդ բաժակին՝ 3 կաթիլ և, 3-րդ բաժակին 4 կաթիլ: Բաժակներում եղած ջուրը յուրաքանչյուրը իր ապակե ձողով խառնում ենք և թողնում 30 րոպե: Հետո որոշում ենք մնացորդային Cl-ի քանակը յուրաքանչյուր բաժակում, դրա համար բոլոր բաժակներին ավելացնում են 5 -ական կաթիլ KY I 5%-ոց լուծույթ և 10 ական կաթիլ 1% օսլայի լուծույթ:

Այն բաժակում որտեղ կա մնացորդային Cl, ջուրը կստանա բաց կապույտ գունավորում, ինչքան մուգ լինի կապույտ գույնը, այնքան Cl-ի քանակը շատ է:

Ենթադրենք առաջին բաժակում գունավորում չկա (մնացորդային Cl-ը բացկայում է), երկրորդում բաց կապույտ գունավորում է, ուրեմն մնացորդային Cl-ի քանակը 0,3-0,5 մգ/լ (նորմալ), իսկ երրորդում կապույտ երանգը մուգ է, ուրեմն Cl-ի քանակը 0,5 մգ/լ շատ է:

Ուրեմն ընտրում ենք երկրորդ բաժակը, որտեղ ավելացրել ենք 3 կաթիլ 1%-նոց քլորակիր: Հետևաբար, քլորի ցուցումը 1լ ջրի համար կկազմի $3 \times 5 = 15$ կաթիլ քլորակիր:

Եթե պահանջվում է քլորացման ենթարկել 200լ ջուր, ապապետք է ավելացնել $15 \times 200 = 3000$ կաթիլ, իսկ քանի որ 25 կաթիլ - 1մլ, ուրեմն $3000 : 25 = 120$ մլ 1%-նոց քլորակրի լուծույթ:

Եթե փորձնական քլորացումից հետո ոչ մի բժակում կապույտ գույն չի առաջանում, ուրեմն փո րձը սկսում ենք 2-րդ փուլից և կաթիլների քանակը բաժակների մեջ ավելացնում ենք 5,6,7 կաթիլ ու 30 րոպե անց նորից որոշում քլորի քանակը:

10-20 մգ/լ ավելորդ Cl-ի քանակը չեզոքացվում է Na-ի հիպոսուլֆիտով $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$ կամ ջուրը ֆիլտրում են ակտիվացված ածխի միջով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Դաշտային պայմաններում ջրի քլորացման համար դոզայի որոշումը

Ջրի վարակազերծումը իրականացվում է քլորացման միջոցով, հատկապես՝ երբ ջրի օրգանոլեպտիկ հատկությունները չեն բավարարում սանիտարական և հիգիենիկ պահանջներին: Եթե տվյալ շրջանում կան ինֆեկցիոն հիվանդության դեպքեր, ապա ջրի գերքլորացումը պարտադիր է:

Համեմատաբար մաքուր ջրի վարակազերծման հմար ակտիվ Cl-ի քանակը պետք է լինի 5-10 մգ/լ, ավելի կեղտոտ ջրերի համար օգտագործում են 10-20 մգ/լ, շատ կեղտոտված և էպիդեմիոլոգիական (համաճարակային) տեսակետից վտնգ ներկայացնող ջրի քլորացման համար պետք է օգտագործել 20-30 մգ/լ (Cl): Քլորի դոզան, որը անհրաժեշտ է ջրի վարակազերծման համար որոշում են փորձնական քլորացման միջոցով: Դրա համար վերցվում է միևնույն ծավալով ջուր տարբեր տարաների մեջ, ապա հետազոտվող ջրին ավելացվում է տարբեր քանակությամբ 1%-ոց քլորակրի լուծույթ: 30 րոպե անց այդ բաժակներում որոշում են մնացորդային Cl-ի քանակը: Կընտրենք Cl-ի այն քանակը, որը համապատասխանում է նորմային (0,3-0,5 մգ/լ), այսինքն՝ բաց կապույտ գունավորում:

Եթե 1լ ջրի վարակազերծման համար անհրաժեշտ է 1,5 կաթիլ 1% քլորի լուծույթ, ապա մեկ դույլ ջրի համար (10լ) կպահանջվի $15 \times 10 = 150$ կաթիլ կամ $150:25 = 6$ մլ քլոր:

Ջրի մեջ մնացորդային Cl-ի որոշման էքսպրես մեթոդ

Ջրի վարակազերծման որակը ստուգելու համար որոշում են ջրում մնացորդային Cl-ի քանակը, որը նորմայում պետք է լինի 0,3-0,5 մգ/լ: Ջրի մեջ մնացորդային Cl-ի քանակը որոշում են հետևյալ կերպ. վերցնում են ջրի նմուշը, վրան ավելացնում են 1-2 կաթիլ օրթոտոլիդին: Օրթոտոլիդինը անգույն, անհոտ լուծույթ է, որը ռեակցիայի մեջ է մտնում Cl-ի հետ: Եթե ջրում կա Cl-ի քանակ, ապա ջուրը դեղնում է: Ըստ դեղնության երանգի որոշում են մնացորդային Cl-ի քանակը 0,1-0,5 մգ/լ: Որքան մուգ է դեղինի երանգը, այնքան շատ է մնացորդային Cl-ի քանակը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Օրվա ռացիոնի հաշվարկ

Օրական սննդի կերակրաբաժնի որակական կազմը և էներգետիկ արժեքը կախված է մարդու տարիքից, քաշից, մասնագիտությունից, առողջական վիճակից, կլիմայական պայմաններից, սեռից և այլն: Ըստ աշխատանքի ծանրության չափահաս բնակչությունը բաժանվում է մի քանի խմբերի.

1. Մտավոր աշխատանքով զբաղվողներ՝ ինժեներներ, ուսանողներ, մանկավարժներ և այլն:
2. Թեթև ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ՝ բուժքույրեր, սանիտարներ, մարզիչներ և այլն:
3. Միջին ծանրության ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ՝ զոդողներ, վիրաբույժներ, վարորդներ և այլն:

4. Ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ՝ շինարարության բանվորներ, հյուսներ, մետաղագործներ և այլն:
 5. Հատուկ ծանր աշխատանքով զբաղվողներ՝ հանքափորեր, ածխահատներ, բեռնակիրներ և այլն:
- Էներգաձախսի նորմերը (կկալ) տարբեր խմբերում տղամարդկանց և կանանց համար հետևյալն են.

Խումբ	Տղամարդիկ	Կանայք
1	2100-24500	1800-2000
2	2500-2800	2100-2200
3	2950-3300	2500-2600
4	3400-3850	2850-3050
5	3750-42000	-

Օրական կերակրաբաժնի էներգետիկ արժեքը և քիմիական կազմը կարելի է հաշվել հիմնվելով մարդու օրապահիկի վրա ամբողջ օրվա կամ առանձին՝ նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար: Հաշվարկը կատարում են օգտվելով համապատասխան աղյուսակից: Օրինակ՝ ենթադրենք 1 մարդու նախաճաշի համար տրված է 200գր 1-ին տեսակի հաց և կարտոֆիլի այուրե, որը պարունակում է 300գր կարտոֆիլ և 15 գր կարագ: 100 գր կարտոֆիլից ստացվում է 53 կկալ էներգիա, 300գր-ից կստացվի $3 \times 53 = 159$ կկալ՝ էներգիա: Ապա հաշվում են կարագից ստացված էներգիան, 100գր –ից ստացվում է 734 կկլ 15 գր –ից կստացվի $15 \times 734 : 100 = 110$ կկալ: 100գր հացից ստացվում է 240 կկալ, 200 գրամից $20 \times 240 : 100 = 480$ կկալ:

Ուրեմն մարդը նախաճաշից ստացավ $159+110+480=749$ կկալ էներգիա:

Օրվա ռացիոնը կազմում են 1 օրվա, 1 շաբաթվա, 10 օրվա համար: Շաբաթվա ընթացքում պետք է ռացիոնում լինեն և մսեղեն և ձավարեղեն և բանջարեղեն և ճարպեր՝ բուսական և կենդանական: Օրական ռացիոնում պետք է լինի 15-17 անվանում սննդամթերք:

Նախաճաշ – 25 % կամ նախաճաշ – 30%

Ճաշ – 35 % ճաշ 40-45 %

Ետ ճաշիկ – 15 % ընթրիք 25-30%

Ընթրիք – 25%

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սննդի բլոկի պլանավորումը, սարքավորումները, հիգիենիկ ռեժիմը

Յուրաքանչյուր հասարակական սննդի օբյեկտ պետք է ապահովի որոշոկի հիգիենիկ նորմեր: Դրանք են՝ համապատասխան սարքավորումներ, ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում, օդափոխություն, ջեռուցում, սանհանգույց և այլն:

Սննդի բլոկի պլանավորումը կատարվում է այնպես, որ սննդի վերամշակումը կատարվի առանձին, իսկ վերջնական պատրաստումը առանձին:

Հասարակական սննդի ձեռնարկությունների պլանավորման հիմնական նպատակը այն է, որ ապահովվի սննդամթերքների հոսքային արտադրության պրոցեսը:

Սննդի բլոկի սարքավորումների հզորությունը պետք է համապատասխանի այդ օբյեկտի տարածքային հզորությանը:

Սննդային ձեռնարկության կազմը կախված է նրա արտադրական պրոֆիլից և հզորությունից: Տարբերում ենք 5 խումբ, շինություններ.

1. առևտրային շինություններ - որոնք բնակչության սպասարկման համար են (կիսաֆաբրիկատներ, պատրաստի ճաշեր, աղցաններ և այլն),
2. արտադրական շինություններ,
3. պահեստային շինություններ,
4. վարչական շինություններ,
5. տեխնիկական կամ օգնող շինություններ (կաթսայատուն, հոսանքի վահանակ օդափոխիչ հարմարանք և այլն):

Խանութները, որոնք պատկանում են առևտրային շինությունների խմբին, պետք է հեռու գտնվեն աղբանոցից, աղբարկղերից և նրանք պետք է ունենան առնվազն երկու մուտք՝ մեկը գնորդների, մյուսը՝ ծառայողական: Խանութում բաժինները պետք է լինեն մասնագիտացված: Պահեստային շինություններում, որոնք տեղակայված են լինում խանութի նկուղային մասում պետք է ամպայման լինեն սառնարաններ կամ սառնարանային խցեր (կամերաներ): Երբեք չի կարելի մի խցում պահել միսը, ձուկը, կաթնեղենը, մրգերը, բանջարեղենը, ինչպես նաև խոհարարական արտադրանքը: Յուրաքանչյուր սառնարանային խցի մեծությունը 5մ² փոքր չպետք է լինի:

Միրգ-բանջարեղենի պահեստները չպետք ունենան պատուհաններ, քանի որ արևի ճառագայթները քայքայում են վիտամինները և կրճատում մթերքների պահպանման ժամկետը:

Վարչական հատվածում լինում է տնօրենի առանձնասենյակը, հաշվապահությունը, հանդերձարանը, զուգարանը և այլն: Զուգարանում պետք է լինի ձեռքերը լվանալու հարմարանքներ և օդային սրբիչներ:

Խանութի սրահներում պետք է կատարվի ամենօրյա ընթացիկ, ամեն շաբաթյա մաքրում: Իսկ ամիսը մեկ անգամ պետք է կատարել գլխավոր մաքրում (սանիտարային օր):

Անհրաժեշտ է խանութում իրականացնել դեզինֆեկցիա, դեզինսեկցիա և դերատիզացիա:

Դեզինֆեկցիան – ֆիզիկական և քիմիական ազդեցությունների կոմպլեքս է:

Դեզինսեկցիան – միջոցառումներ են, որոնք ուղղված են միջատների դեմ:

Դեռատիզացիան – պայքարի միջոցներ են ուղղված կրծողների դեմ:

Խանութներում պահեստային հատվածներում մեծ նշանակություն ունի օպտիմալ ջերմաստիճանի և խոնավության պահպանումը: Հարաբերական խոնավությունը առևտրային սրահներում պետք է լինի 40-60%, սովորական պահեստներում 60- 75%, իսկ սառեցվող խցերում մինչև 90%: Ցուրտ եղանակին խանութը պետք է ապահովված լինի օպտիմալ ջերմությամբ:

Ջրամատակարարման հիգիենիկ պահաջները ևս խանութներում պետք է պահպանել: Առաջին հերթին ուշադրություն է դարձվում ջրի օրգանոլեպտիկ հատկություններին, ինչպես նաև քիմիական կազմին: Ջրի կարևոր հիգիենիկ ցուցանիշներից է կոշտությունը: Մթերային խանութները որպես կանոն ունեն կենտրոնացված ջրամատակարարում:

Սննդի հետ կապված առևտրային շինություններում մեծ ուշադրություն պետք է դարձնել կոյուղու ճիշտ տեղադրմանը: Եթե բնակելի շենքում է գտնվում խանութը, ապա նրանց կոյուղու ջրերը պետք է հեռացվեն տարբեր խողովակներով և ունենան տարբեր տեղադրություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սննդամթերքի արտադրության, տեղափոխման, պահպանման, իրացման և հիգիենիկ ռեժիմի հսկողությունը

Հասարակական սննդի օբյեկտներում սննդամթերքների արտադրության ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ պահպանվի բոլոր պրոցեսների անընդհատությունը՝ արտադրությունից մինչև տեղափոխումը, պահպանումը և իրացումը: Չի կարելի, որ հում, չմշակված սննդամթերքը և արդեն պատրաստի կամ կիսապատրաստ (կիսաֆաբրիկատ) սննդամթերքները գտնվեն միևնույն կառույցահատվածում:

Հիմնական սանիտարական կանոնն է – սննդամթերքների տեղափոխումը պետք է իրականացվի հատուկ,

մասնագիտացված փոխադրամիջոցներով: Ըստ որում կազմակերպությունները, որոնք տնօրինում են այդ փոխադրամիջոցները պարտավոր են պահել մաքուր և հաճախ ախտահանել: Փոխադրամիջոցները կարող են լինել նեղ մասնագիտացված (կաթ, հաց, մսամթերք և այլն):

Շուտ փչացող մթերքների տեղափոխումը իրականացվում է փոխադրամիջոցներով, որտեղ պահպանվում է ցածր ջերմաստիճան: Հաց-հացամթերքները պետք է տեղափոխվեն հատուկ, փակ մեքենաներով, որոնք ունեն դարակներ կամ արկղեր:

Կրեմով պատրաստված հրուշակեղենը պետք է դնեն լատոկների մեջ, որոնք ունեն կափարիչ:

Միրգ-բանջարեղենը պետք է տեղափոխել արկղերի, պարկերի, ցանցերի մեջ: Ամեն մի փոխադրամիջոց պետք է ունենա սանիտարական անձնագիր, որը տրված է լինում սան-էպիդ. հսկողության կողմից: Առաքիչը ևս պետք է ունենա սանիտարական անձնագիր: Սննդամթերքները, որոնք ստացվել են վաճառքի համար պետք է ունենան ուղեկցող փաստաթղթեր, որտեղ նշված է լինում մթերքի պատրաստման և օգտագործման ժամկետները: Ընդունվող մթերքների որակը կարելի է որոշել նաև նրա օրգանոլեպտիկ հատկություններով: Չի կարելի մթերքը ընդունել առանց ուղեկցող փաստաթղթի կամ կնիքի:

Չի կարելի ընդունել բադի, սագի ձվեր, հավի ձվերը ինկուբատորից, այլուր, ծավարեղեն, որոնք վարակված են վնասատուներով, բոմբաժի (ուռած) ենթարկված, ժամկետանց պահածոներ:

Սննդամթերքների արտադրության սպասարկման բնագավառում աշխատողների նկատմամբ ներկայացվում է մի շարք հիգիենիկ պահանջներ: Շատ կարևոր է աշխատողին անձնական հիգիենայի պահպանումը (հագուստի, մարմնի, մաքրության պահպանումը): Վաճառողը աշխատանքը սկսելուց առաջ պետք է օճառով լվացվի, ինչպես նաև եղունգները պետք է կարճ կտրած լինի: Կարևոր է նաև բերանի խոռոչի առամների վիճակը: Աշխատանքի ընդունվելուց առաջ վաճառողը պետք է անցնի վիճակի բուժզննում և ունենա սանիտարական գրքույկ: Նա պետք է պարտադիր տարին մեկ անգամ՝ անցնի ֆյուրոգրաֆիա, ինչպես նաև լաբորատոր քննություն:

Չեն կարող սննդարդյունաբերությունում աշխատել անձինք, ովքեր հիվանդ են սուր վարակիչ հիվանդություններով՝ աղիքային ինֆեկցիաներ, սեռավարակներ, տառապում են թոքախտի ակտիվ ձևով, մաշկի հիվանդություններով, ճիճվային հիվանդություններով և այլն:

Սննդամթերքների առաջնային մշակման համար պետք է լինեն հարմարություններ, այսինքն՝ բարջարեղենը պետք է առանձին մշակվի, իսկ միս-ձկնեղենը առանձին: Պատրաստված կիսաֆաբրիկատները անմիջապես պետք է ենթարկել ջերմային մշակման: Ջերմային մշակումը դյուրացնում է սննդի յուրացումը և միաժամանակ վերանում են միկրոօրգանիզմները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Բուժական դիետաներ

Բուժիչ դիետաները պետք է ապահովեն սննդի բոլոր հիմնական ֆունկցիաները:

Օրգանիզմի էներգետիկ պահանջը պետք է ապահովվեն հիմնականում հացը, շաքարը, ձավարեղենը, օսլայով հարուստ բանջարեղենը, ճարպերը: Պլաստիկ ֆունկցիան պետք է հիմնականում ապահովվեն սպիտակուցները և ավելի քիչ ճարպերը և ածխաջրերը:

Օրգանիզմում նյութափոխանակությանը մասնակցում են նաև ֆերմենտները, վիտամինները: Որպեսզի օրգանիզմի պաշտպանական ֆունկցիան ապահովվի, պետք է ճիշտ ընտրել բալանսավորված կամ հավասարակշռված սնունդը և սննդի ռեժիմը: Ճիշտ ընտրված սննդակարգը (դիետան) նպաստում է նյութափոխանակության լավացմանը, դրանով էլ կարագանա օրգանիզմի առողջացման պրոցեսը և հիվանդությունը չի անցնի քրոնիկ ձևի:

Սննդակարգի ընտրությունը որոշակի հիվանդության դեպքում հաշվի է առնում ոչ միայն հիմնական հիվանդությունը, այլ նաև ուղեկցող հիվանդությունները:

Սննդի բաղադրության որակից, բալանսավորումից և ռեժիմից կախված մեծանում է օրգանիզմի կայունությունը տարբեր վարակիչ հիվանդությունների նկատմամբ:

Հիմնական բուժիչ դիետաների կրճատ բնութագիրը

Ցուցումներ	Առանձնահատկություններ
Հետվիրահատական շրջան (3-6 օր անց)	Հեղուկ, ցածր կալորիականության սնունդ (օրական մինչև 1000 կկալ)
Ստամոքսի, 12 մատյա աղիքի խոցային հիվանդություններ, հիպեր (գեր) և նորմալ թթվայնության գաստրիտ	Մեխանիկական և քիմիական գրգռիչների սահմանափակում: Մանրացրած, խաշած սնունդ: Արգելվում է մսի բուլյոնը, սուր համեմունքները, պահածոները:
Ցածր թթվայնության գաստրիտ	Լիարժեք չափավոր, խնայող, խաշած և շոգեխաշած սնունդ:
Աղիների սուր և քրոնիկ հիվանդություններ	Մեխանիկական և քիմիական գրգռիչների սահմանափակում, կարելի է ապուրներ, շիլաներ, շոգեխաշած կոտլետներ, թեյ, օրական մինչև 2500կկալ:
Լյարդի, լեղուղիների՝ հիվանդություններ	Լիարժեք տապակած սնունդ և ճարպոտ սուր համեմունքները:
Երիկամների և միզուղիների հիվանդություններ	Սպիտակուցների որոշ սահմանափակում, սնունդ պատրաստել առանց աղի (3-6 օր): Հեղուկի սահմանափակում մինչև 1լ:
Ճարպակալում	Կալորայնության սահմանափակում մինչև 1700-1800 կկալ, հեղուկի, աղի, տապակած, քերած սննդի սահմանափակում:
Շաքարային դիաբետ	Ածխաջրերի խիստ սահմանափակում աղի, խոլեստերինի սահմանափակում մինչև 2500կկալ:
Սիրտ-անոթային համակարգի հիվ-ներ	Աղի սահմանափակում 5-6 գր, հեղուկի և կենդանական ճարպերի սահմանափակում: Բացառվում է գրգռիչ

	ճաշատեսակներ, խմիչքներ և համեմունքներ:
Տոբերկույոզ	Բարձր կալորայնության սնունդ, շատ սպիտակուցներ, ճարպեր և վիտամիններ:
Առողջացողների համար	Լիարժեք սնունդ մեծ քանակությամբ վիտամիններով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կազմել օրվա ռեժիմ հաշվի առնելով քրոնոտիպը

Մեծահասակի և երեխայի օրվա ռեժիմը կազմելիս, պետք է անպայման հաշվի առնել քրոնոտիպը:

Հայտնի քրոնոկենսաբան Ֆրանց Խալբերգը բոլոր մարդկանց բաժանում է հետևյալ քրոնոտիպերի՝

1. Աղավնիներ - սրանք հարմարվում են աշխատանքի տարբեր պայմաններին, օրվա տարբեր ժամերին, երբ դա պահանջվում է:
2. Բուեր - այս խմբին պատկանողները արդյունավետ են աշխատում երեկոյան և նույնիսկ գիշերվա ժամերին:
3. Արտոյտներ - այս խմբին պատկանողները իրենց լավ են զգում օրվա առաջին կեսին:

Երեխաները ևս ունեն իրենց հատուկ բիոռիթմերը, սակայն ի տարբերություն աղավնիների երեխաների մոտ այս խումբը անվանում են առիթմիկներ: Ինչքան երեխայի բիոռիթմերը կայուն են, այնքան երեխայի աճն ու զարգացումը լավ է ընթանում: Շատ կարևոր է հասկանալ թե երեխան որ քրոնոտիպին է պատկանում, որպեսզի ճիշտ

կազմակերպվի նրա օրվա ռեժիմը և նրանից անկարելին չպահանջենք:

Ֆրանց Խալբերգը պնդում է, որ մարդկային օրգանիզմը ունի կյանքի իր օրացույցը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Հոգնածության որոշումը ստուգիչ աղյուսակների միջոցով

Աշխատանքը ֆիզիոլոգիական տեսակետից հանդիսանում է մարդկային օրգանիզմի ֆունկցիա, որի իրագործումը կատարվում է անջատված էներգիայի շնորհիվ: Աշխատանքը նպատակադրված գործունեություն է, որի ընթացքում մարդը ներգործելով բնության վրա, փոփոխելով նրան ստեղծում է նյութական արժեքներ:

Աշխատանքի հիգիենան ընդհանուր հիգիենայի մի բաժինն է, որը ուսումնասիրում է արտադրական պրոցեսի և արտաքին միջավայրի ազդեցությունը աշխատող մարդու վրա:

Աշխատանքի հիգիենան մշակում է զանազան հիգիենիկ նորմատիվներ, սանիտարական միջոցառումներ աշխատանքային բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Աշխատանքի ընթացքում մարդու օրգանիզմում կատարվում են մի շարք ֆիզիոլոգիական պրոցեսներ: Դրանցից մեկը հոգնածությունն է, որը հատուկ հետադարձ ֆիզիոլոգիական վիճակ է օրգանիզմի համար:

Այն ի հայտ է գալիս երկար և ծանր աշխատանքից հետո և արտահայտվում է աշխատունակության անկումով: Եթե

աշխատանքը ճիշտ չի կազմակերպվում, նույնիսկ գիշերային հանգստից հետո աշխատունակությունը լրիվ չի վերականգնվում և աստիճանաբար ի հայտ է գալիս գերհոգնածություն, որը արդեն ախտաբանական պրոցես է, որի ժամանակ նկատվում է գլխացավ, անքնություն, ախորժակի անկում, մարդը ունենում է գրգռված վիճակ:

Օրգանիզմի աշխատունակության ուսումնասիրությունը կարելի է կատարել մի քանի մեթոդների օգնությամբ: Ըստ որում աշխատունակության, քանակական և որակական ցուցանիշները որոշվում է առաջադրանքի կամ ծավալով կամ կատարման ժամանակով:

Փորձարկման ենթարկվողը ստանում է առաջադրանք: Օրինակ սեղմել կոճակը ամեն 4-րդ թվից հետո, սկսելով 1-ից, այսինքն 1,5,9,13,17 և այլն, իսկ հետո 2-ից սկսած, այսինքն 2,6,10,14 և այլն, հետո 3-ից սկսած, այսինքն 3,7,11,15,19 և այլն: Կրկնակի քննության ժամանակ առաջադրանքը մի փոքր փոխվում է, այսինքն վահանակի վրա գրանցվում են թվերը և կատարված սխալների քանակը:

Ստուգիչ մեթոդով փորձերը կարելի է կատարել նաև տասերի և երկրաչափական պատկերների թեստերով: Ընդ որում տառերով թեստերը կատարվում են 1 թուղթի ընթացքում և հաշվում սխալների քանակը: Եթե աշխատանքը ընթանում է դանդաղ կամ սխալների քանակը թույլատրելիից շատ է, ապա սա ասում է այն մասին, որ փորձի ենթարկվողը հոգնած է:

Շատ հեշտ է նշաններով թեստը, երբ պատկերված են 100 երկրաչափական նշաններ (4 տեսակի երկրա-

չափական պատկերներ, այսինքն յուրաքանչյուրից 25 հատ):

Սննդամթերքի տեղափոխումը պետք է իրականացվի համապատասխան սարքավորումներ ունեցող տրանսպորտով:

Մթերքի պահպանումը պետք է կատարվի որոշակի ջերմաստիճանում:

Աղացած միսը 6 C⁰-ի պայմաններում կարելի է պահել 6 ժամից ոչ ավել:

Սննդամթերքի առաջնային մշակումը պետք է կատարել առանձին, օրինակ չի կարելի բանջարեղենը և միս-ձկնեղենը միևնույն տեղում մշակել: Բանջարեղենը պետք է լվանալ հոսող ջրի տակ: Միսը լվալուց առաջ պետք է լվանալ հոսող ջրով: Մսեղենը և ձկնեղենը պետք է մշակվեն առանձին սեղանների վրա: Պատրաստված կիսաֆաբրիկատները պետք է անմիջապես ենթարկել ջերմային մշակման: Ջերմային մշակումը հեշտացնում է սննդի յուրացումը և վերացնում միկրոօրգանիզմները:

Սննդամթերքի վաճառքը պետք է իրականացնել տարբեր բաժիններում:

Սննդի արտադրությունում աշխատողների անձնական հիգիենային պետք է մեծ ուշադրություն դարձնել: Համաձայն գոյություն ունեցող հրահանգի սննդա-արդյունաբերությունում (խանութներում) չեն կարող աշխատել անձիք հետևյալ հիվանդություններով՝ աղիքային ինֆեկցիաներով, թոքաբորբով, մաշկի թարախային հիվանդություններով, վեներական հիվանդություններով,

դիֆթերիայով, հելմինթոզով, մաշկի վնասվածքներով և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Քսենոբիոտիկներ

Ժամանակակից մարդը ապրում է արհեստականորեն ստեղծված միջավայրում:

XX դարում հատկապես վերջին տասնամյակում, մարդկային օրգանիզմը ենթարկվում է տարբեր նյութերի ազդեցությանը, որոնք սինթեզվել են հենց իր կողմից և բնության մեջ չեն հանդիպում քանի որ այդ նյութերը մարդու օրգանիզմի համար օտար են, դրանք կոչվում են քսենոբիոտիկներ հունարեն՝ - օտար, օտարածին:

Տարեց-տարի այդ նյութերի մուտքը օրգանիզմ մեծանում է: Դրանց թվին են պատկանում ալիֆատիկ ածխաջրերը, բարձրամոլեկուլյար միացությունները, նիտրատները, նիտրոզամիները, շատ դեղամիջոցներ և այլն: Ծանր մետաղները չեն դասվում քսենոբիոտիկների շարքին, սակայն դրանց որոշակի կոնցենտրացիան թունավոր (տոքսիկ) ազդեցություն կարող է ունենալ օրգանիզմի վրա:

Քսենոբիոտիկները օրգանիզմ կարող են մտնել տարբեր ուղիներով՝ օրինակ թոքերով, մարսողական համակարգով, մաշկի միջոցով:

Քսենոբիոտիկները կարող են՝

1. անբարենպաստ ազդեցություն ունենալ մարսողության և սննդամթերքի յուրացման վրա,
2. իջեցնել իմունիտետը,

3. ալերգիկ ռեակցիաների պատճառ հանդիսանալ,
4. ունենալ քաղցկեղային ազդեցություն,
5. արագացնել ծերացման պրոցեսները,
6. խախտել օրգանիզմի վերարտադրողական պրոցեսները:

Սննդամթերքի աղտոտման հիմնական աղբյուրը կարող են լինել նիտրատները և պեստիցիդները (թունաքիմիկատները):

Քաղցկեղածին նյութերը սննդանյութերին կարող են անցնել տարբեր տարաներից, փաթեթներից, (упаковка), սննդի պատրաստման, պահպանման և տեղափոխման ժամանակ:

Գյուղմթերքների արմատներում, ցողուններում, տերևակոթերում մեծ քանակությամբ նիտրատներ կարող են լինել: Տերևներում և արմատապտուղներում նիտրատները շատ են քան պտուղներում: Մթերքներից նիտրատների հեռացմանը նպաստում են երկար ժամանակ ջրի մեջ թողնելը և լվանալը: Եփելու ընթացքում մինչև 80% նիտրատները և նիտրիտները դուրս են գալիս եփուկի մեջ:

Գազարի հյուսք, եթե թողնենք 24-48 ժամ, ապա այնտեղ կկուտակվեն նիտրատներ և թունավորման պատճառ կհանդիսանան:

Կենսաբանական ակտիվ հավելանյութեր (Биологически активные добавки БАД)

Կենսաբանական ակտիվ հավելանյութերը դրանք բնական խտանյութեր են կամ դրանց նման նյութեր, որոնք օրգանիզմ են ներմուծվում սննդի հետ միասին:

Կենսաբանական ակտիվ հավելանյութերը լինում են .

1. Նուտրիցիոններ (Vit –ներ, որոշ հանքային աղեր, միկրոէլեմենտներ, ամինոթթուներ, այսինքն սննդի բնական բաղկացուցիչ մասեր են),
2. պարաֆարմացուտիկներ (որոշ օրգանական թթուներ, կոֆեին,
3. էոբիոտիկներ (կենդանի միկրոօրգանիզմներ, որոնք կարգավորում են աղիների գործունեությունը):

Սննդային հավելումներ

Դրանք բնական և քիմիական միացություններ են, որոնք սահմանափակ քանակությամբ օգտագործվում են սննդամթերքների արտադրության տարբեր էտապներում: Սրանք թույլ են տալիս երկարացնել մթերքի պահպանման ժամկետը, նրանց տեղափոխումը և այլն:

Տարբեր երկրներում օգտագործվում են մոտավորապես 500 սննդային հավելումներ: Եվրոմիության տարբեր երկրներում օգտագործվում է E տառը:

Ենթադրենք ասկորբինաթթուն էտիկետի վրա կարող է նշվել որպես **E - 300** հակաօքսիդիչ (антиокислитель):

E100 - E182 ներկանյութեր են, որոնք օգտագործվում են սննդին տարբեր գույներ տալու համար:

E200 և ավելի – կոնսերվանտներ են, որոնք նպաստում են մթերքի երկար պահպանմանը:

E300 և ավելի – հակաօքսիդիչ են, որոնք դանդաղեցնում են օքսիդացման պրոցեսները և չեն թողնում, որ մթերքը շուտ փչանա: Դրանք գործունեությամբ նման են կոնսերվանտների:

E400 և ավելի – կայունացուցիչներն են, որոնք պահպանում են մթերքի կառուցվածքը:

E500 և ավելի - էմուլգատորներ են, իրենց գործողությամբ նման են կայունացուցիչներին:

E600 և ավելի – համի և հոտի ուժեղացուցիչներ են:

E700, E800 և ավելի - պահեստային ինդեքսներ (ցանկեր):

E230, 231, 232 - վտանգվոր են, քանի եր առաջացնում են ալերգիա:

E900 հակափրփրային նյութեր են:

E1000 և ավելի նոր ձևավորվող խումբ է, որտեղ մտնում են քաղցրացնող նյութեր, օսլա, ալյուր և այլն:

E121, E123 կանցեռոգեն ազդեցություն ունեն:

E240 ֆորմալդեհիտ կասկածելի հավելում է, շատ երկրներում արգելված է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Բուժական դիետաներ

Բուժիչ դիետաները պետք է ապահովեն սննդի բոլոր հիմնական ֆունկցիաները:

Օրգանիզմի էներգետիկ պահանջը պետք է ապահովվեն հիմնականում հացը, շաքարը, ծավարեղենը, օսլայով հարուստ բանջարեղենը, ճարպերը:

Պլաստիկ ֆունկցիան պետք է հիմնականում ապահովվեն սպիտակուցները և ավելի քիչ ճարպերն ու ածխաջրերը: Օրգանիզմում նյութափոխանակությանը մասնակցում են ֆերմենտներ, Vit-ները: Որպեսզի օրգանիզմի պաշտպանական ֆունկցիան ապահովվի պետք է ճիշտ ընտրել բալանսավորված սնունդը և սննդի ռեժիմը: Ճիշտ ընտրված դիետան, նպաստում է նյութափոխանակության լավացմանը և կարագանա օրգանիզմի առողջացման պրոցեսը և հիվանդությունը չի անցնի քրոնիկ ձևի:

Դիետայի ընտրությունը որոշոկի հիվանդության դեպքում հաշվի է առնված ոչ միայն հիմնական հիվանդությունը, այլև ուղեկցող հիվանդությունները:

Սննդի բաղադրության որակից, բալանսավորումից և ռեժիմից կախված մեծանում է օրգանիզմի կայունությունը տարբեր վարակիչ հիվանդությունների, այլ անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ:

Հիմնական բուժիչ դիետաների բնութագիրը

Սեղանի N	Հիվանդություն	Սննդամթերք
0	Հետվիրահատական շրջն. (3-6 օր անց)	Ձածր կալորիականությամբ հեղուկ սնունդ (օրեկան մինչև 1000 կկալ)
1	Ստամոքսի, 12-մատնյա աղիքի խոցային	Մեխանիկական և քիմիական սահմանափակում:

	հիվանդության, գեր(հիպեր) և նորմալ թթվայնության գաստրիտ	Մանրացրած, խաշած սնունդ: Արգելվում է մսի բուլյոնը, սուր համեմունքները, պահածոները:
2	Հիպոթթվայնության գաստրիտ	Լիարժեք, չափավոր, խնայող սնունդ՝ խաշած, շոգեխաշած վիճակում:
4	Ազիների սուր և խրոնիկ հիվանդություններ	Մեխանիկական և քիմիական գրգռիչների սահմանափակում, կարելի է ապուրներ, կաշաներ, շոգեխաշած կոտլետներ, կիսել, թունդ թեյ (ճրռկան մինչև 2500 կկալ):
5	Լյարդի, լեղուղիների հիվանդություններ:	Լիարժեք սնունդ, սահմանափակելով տապակած և ճարպոտ ճաշատեսակները, սուր համեմունքները:
7	Երիկամների և միզուղիների հիվանդություններ	Սպիտակուցների որոշ սահմանափակում: Սնունդը պետք է պատրաստել առանց աղի (3-4 գր.): Հեղուկի սահմանափակում մինչև 1 լ:
8	Ճարպակալում	Կարծրականության սահմանափակում մինչև 1700-1800 կկալ:
9	Շաքարային դիաբետ	Ածխաջրերի խիստ սահմանափակում, աղի, խոլեստերինի սահմանափակում օրեկան մինչև 2500 կկալ:

10	Սիրտ-անոթային հիվանդություններ	Աղի սահմանափակում (5-6 գր.), հեղուկի սահմանափակում մինչև 1-2 լ. օրական և կենդանական ճարպերի սահմանափակում: Բացառել գրգռիչ ճաշատեսակներ, խմիչքներ, համեմունքներ:
11	Թոքախտ	Բարձր կալորիականություն ունեցող սնունդ (3000-3400 կկալ.), շատ սպիտակուցներ, ճարպեր, վիտամիններ:
12	Առողջացողների համար	Լիարժեք վիտամիններով հարուստ սնունդ 2800-2900 կկալ.:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Շինության բնական և արհեստական լուսավորվածության պայմանների վերլուծությունը

Բնական լուսավորվածության մասին գաղափար կազմելու համար օգտագործում են մի քանի ցուցանիշներ՝ լույսի գործակից, անկման բեկման անկյուններ:

Լույսի գործակից

Լույսի գործակիցն իրենից ներկայացնում է պատուհանի ապակյա մասի մակերեսի հարաբերությունը հատակի մակերեսին: Որոշման համար չափում են պատուհանի

ապակյա մասի մակերեսը առանց փայտյա մասի և սենյակի հատկի մակերեսը՝

Օրինակ՝ պատուհանի մակերեսը՝ 15 մ2, իսկ հատակինը 45 մ2:

Այսինքն, 1 մաս պատուհանին համապատասխանում է 3 մաս հատակ:

Անկման և բեկման անկյուններ

Անման անկյունը կազմվում է 2 գծերի հատումից, որոնցից մեկը գտնում է աշխատատեղից մինչև պատուհանի վերին եզրը, մյուսը՝ աշխատատեղից մինչև պատուհանի ստորին եզրը: Անկման անկյունը 27 % -g փոքր չպետք է լինի: Որքան պատուհանից հեռանանք, այնքան այդ անկյունը կփոքրանա: Այդ անկյունը որոշելու համար չափում ենք աշխատատեղից մինչև պատուհանի ստորին եզրի միջև եղած տարածությունը և պատուհանի բարձրությունը:

Ստացվում է մի ուղղանկյուն եռանկյուն, որի 2 էջերը հայտնի է:


A-աշխատատեղը

B-պատուհանի ստորին եզրերը

C-պատուհանի վերին եզրերը

L-անկման անկյուն

β - բեկման անկյուն



$\operatorname{tg} \alpha = \text{պատուհանի բարձրություն/աշխատատեղից մինչև ստորին եզրը եղած հեռավորություն:}$

Այնուհետև համապատասխան աղյուսակով գտնում ենք $\operatorname{tg} \alpha$ -ն:

Օրինակ՝ պատուհանի բարձրությունը 1մ 60սմ, իսկ աշխատատեղից մինչև պատուհանի ստորին եզրը 3մ 20սմ:
 $\operatorname{tg} \alpha = 1.60 / 3.20 = 0.5$

Աղյուսակով 0.5 համապատասխանում է 27 աստիճան անկյանը:

Աշխատատեղի լուսավորվածությունը որոշում են նաև հատուկ սարքերի միջոցով, որոնք կոչվում են լյուքսմետրեր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Հիվանդանոցների հիվանդասենյակների սանիտարա - հիգիենիկ հետազոտությունը

